

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

2015 թվականի մայիսի 7-ի թիվ 7 նիստի

ԵՊՀ ԴԻՍԿՐԵՏ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՏԵՍԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆԻ ԴՈՑԵՆՏ ՎԱՀԱԳՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ «ԱԼԳՈՐԻԹՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՀԱՇԻՎ» ՎԵՐՆԱԳՐՈՎ ՁԵՌՆԱՐԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՈՐՊԵՍ ԲՈՒՀԱԿԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՄԻՋՆՈՐԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ԵՊՀ կանոնադրության 49-րդ կետի 12-րդ և ԵՊՀ գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 12-րդ ենթակետերով՝ Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. ԵՊՀ դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի ամբիոնի դոցենտ Վահագն Միքայելյանի «Ալգորիթմական հանրահաշիվ» վերնագրով ձեռնարկը երաշխավորել հրատարակության:
2. Միջնորդել ՀՀ կրթության և գիտության նախարարությանը՝ նշված ձեռնարկը որպես բուհական դասագիրք ճանաչելու հարցում:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ